ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/42

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ

Դ. Վարդանյանի (լիազորագիր, տրված՝ 28.04.2020թ.),

Լ. Խալաթյանի (լիազորագիր, տրված՝ 28.04.2020թ.),

Ա. Ազատյանի (լիազորագիր, տրված՝ 28.04.2020թ.)

քննելով «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Մրցույթ) շրջանակներում «ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ-ի կողմից 22.04.2020թ. ներկայացված (22.04.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/42 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումներն և պահանջը.</u>

«ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 22.04.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է, որ գնման առարկա է

համարվում «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի ձեռքբերումը, որը իրականացվում է ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով բաց մրցույթով, մեկ չափաբաժնով՝ ներկայացնելով գնման առարկայի նկարագրությունը:

Ընկերությունը նշել է, որ Մրցույթի հայտարարությունը և հրավերը հաստատվել են գնահատող հանձնաժողովի 2020 թվականի մարտի 13-ի թիվ 1 որոշմամբ՝ հրապարակվելով gnumner.am կայքում նույն օրը, և հայտերի վերջնաժամկետ է սահմանվել հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 41-րդ օրը, ժամը 11:00-ն:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները և վեճի առարկան.

Ընկերությունը նշել է, որ ցանկացած գնման ընթացակարգ հիմնվում է որոշակի սկզբունքների վրա, որոնք կանխորոշված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Ընկերությունը հայտնել է, որ նշված սկզբունքների պահպանման համար էական նշանակություն ունի գնման առարկայի բնութագրումը՝ սահմանված կանոնների համաձայն: Այսպես՝ Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է.

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն

դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ընկերությունը հայտնել է, որ վերը նշված նորմերի վերլուծություններից առնվազն բխում է հետևյալը՝ գնման առարկայի բնութագիրը.

- պետք է օբյեկտիվորեն հիմնավորված լինի
- պետք է լինի համարժեք Պատվիրատուի կարիքների համար
- չպետք է իր պայմաններով հանգեցնի մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների
- պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ բոլոր հնարավոր մասնակիցների համար:

Ընկերությունը հայտնել է, որ մինչդեռ, Մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից գնման առարկայի բնութագիրը սահմանելիս ներառվել է այնպիսի պայման, որի արդյունքում խախտվում են վերը նշված բոլոր սկզբունքները:

Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրում, ի թիվս այլնի, նշվել են հետևյալ պայմանները՝

- Մագնիսական դաշտի լարումը ոչ պակաս, քան՝ 1,5 Տեսլա
- Շերտի նվազագույն հաստությունը 2D և 3D ռեժիմներում համապատասխանաբար կազմում է ոչ ավել քան 0,1 և 0,1 մմ:

Ընկերությունը հայտնել է, որ գնման առարկայի շուկայի ուսումնասիրության արդյունքում շերտի հաստության հնարավորությունները հետևյալն են՝

Մոդել/Կարողություններ	2D ռեժիմում սկանավորման նվազագույն հաստությունը	3D ռեժիմում սկանավորման նվազագույն հաստությունը
Philips Ingenia 1.5T	0,5 mm	0,05 mm
Hitachi Echelon Oval 1.5T	0,5 mm	0,05 mm
Siemens Magnetom Aera 1.5T	0,1 mm	0,05 mm
GE Optima MR450W GEM 1.5T	0,2 mm	0,1 mm
Canon Vantage Titan 1.5T	0,5 mm	0,05 mm

Այսինքն, շուկայում հասանելի ապրանքների և գնման բնութագրի համեմատությունը ցույց է տալիս, որ զուտ տեխնիկական տեսանկյունից սույն գնման ընթացակարգով կարող է մատակարարվել միայն մեկ տեսակի ապրանք, այն է՝ Siemens Magnetom Aera 1.5T, որը բնականաբար մատակարարում է բացառիկ իրավունք ունեցող միայն մեկ ընկերություն:

Ընկերությունը նշել է, որ ընդ որում, նման պայմանի՝ 2D ռեժիմում ոչ ավել քան 0,1 մմ շերտի հաստության ապահովումը համարվում է չհիմնավորված օբյեկտիվորեն, քանի որ Պատվիրատուի սույն գնման ընթացակարգով հետապնդած կարիքների համար բավարար են նաև ավելի բարձր հաստությամբ սկանավորումները, որի դեպքում արտապատկերումը տեղի է ունենում համարժեք պարզությամբ և սկանավորման ողջամիտ ժամկետում (0,1մմ շերտի հաստությամբ մի քանի ժամ):

Ընկերությունը հայտնել է, որ դա հիմնավորվում է նաև սույն բողոքին կից ներկայացվող գրություններով, որոնց համաձայն 2D ռեժիմով սկանավորման ժամանակ Hitachi Echelon Oval 1.5T ապրանքատեսակը, Philips ընկերության և Canon Medical Systems Corporation ընկերության ՄՌՇ համալիրները ապահովում է նվազագույն 0,5 մմ շերտի հաստություն:

Ընկերությունը գտնում է, որ արհեստական եղանակով գնման առարկայի բնութագրում սահմանվել է պայման, որը ոչ միայն համարժեք չէ Պատվիրատուի կարիքներին, այլ նաև ստեղծում է հնարավորություն կոնկրետ մեկ ապրանքատեսակ մատակարարելու և միայն մեկ կազմակերպության մասնակցության համար, ով իրավունք ունի մատակարարել նման ապրանք:

Ընկերությունը հայտնել է, որ նաև Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից է հստակ բխում, որ գնման առարկայի բնութագիրը պետք է սահմանվի այնպես, որ պահանջ չպարունակի կոնկրետ ապրանքատեսակի:

Սույն գործով, կոնկրետ ապրանքատեսակ չի նշվում, սակայն քողարկված սահմանվում են պայմաններ, երբ հստակ է, որ կարող է մատակարարվել միայն մեկ ապրանքատեսակ:

Արդյունքում, խախտվում է նաև վերը նշված՝ մրցույթին մասնակցելու հավասարությունը և մրցակցությունը, քանի որ թե բողոքաբերը, թե մյուս մասնակիցները (բացառությամբ նշված ապրանքատեսակը մատակարարող ընկերության) չեն կարող մասնակցել սույն մրցույթին:

Ընկերությունը, վկայակոչելով Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի բ ենթակետը, ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել ընդունել որոշում՝ նույն հանձնաժողովի 2020 թվականի մարտի 13-ի թիվ 1 որոշումը դադարեցնելու և նույն գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.04.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ, ներկայացված բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.04.2019թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/42 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար մագնիսառեզոնանսային տոմոգրաֆի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և

հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***13.03.2020թ.***:

2. «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով բաց մրցույթի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***13.03.2020թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՏԵԼԻԱ-ՄԵԴ» ՓԲԸ-ի 22.04.2020թ. ներկայացված բողոքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

3) **գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը**: ...

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

2) հրավերի տեքստը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 22.04.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/5995-2020 գրությամբ դիմել է «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին՝ խնդրելով տրամադրել «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով մրցույթի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների

պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 23.04.2020թ. թիվ 01/10-53 գրությամբ տրամադրել է պահանջվող փաստաթուղթը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ գնումների պլանը, ինչպես նաև Մրցույթի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***13.03.2020թ.***, այսինքն՝ նույն օրը, մինչդեռ վերոհիշյալ նորմերից բխում է, որ **պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից, հետևաբար՝ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը գնումների պլանը հրապարակելու օրը, այն է՝ 13.03.2020թ., դեռևս օժտված չի եղել գնման հայտը հաստատելու իրավասությամբ:**

Ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը իրավասու չէր գնման պահանջի ծագման օրը կազմել գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովը, կազմավորվելու արդյունքում, Կարգի 31-րդ կետի համաձայն՝ իրավասու կլիներ հաստատելու գնումների հայտարարության և հրավերի տեքստը, իսկ գնումների համակարգողը իրավասու չէր իրականացնելու Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով մրցույթը կազմակերպվել է ոչ իրավաչափ, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 20-րդ, 21-րդ և 31-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Մրցույթը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մրցույթն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում բողոքով վիճարկվող Տեխնիկական բնութագրի իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՏԵԼԻԱ ՄԵԴ» ՍՊԸ-ի կողմից 22.04.2020թ. ներկայացված բողոքը բավարարել. պարտավորեցնել Մրցույթի գնահատող հանձնաժողովին ՈՒԱԿ-ԲՄԱՊՁԲ-20/42 ծածկագրով բաց մրցույթը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**